

ՀԱԿՈՐ ՕՇԱԿԱՆԻ «ՍՈՒԼԷՅՄԱՆ ԷՖԷՆՏԻ» ՎԵՊԸ

(Ի՞նչ է թուրքը)

Օշականի «Հարյուր Մեկ Տարվան» խորագիրը կրող եռագրությունն ավարտվում է «Սուլէյման էֆէնտի» վեպով: Վիպասանը խորհուրդներ ստեղծելու մեծ վարպետ լինելով, եռագրության խորագիրն էլ ստեղծել է հատուկ խորհրդով: Այդ խորագրի տակ հավաքագրված երեք վեպերի հերոսների կյանքը ներկայացվում է բանտից, ուր նրանք դատապարտված են հարյուր մեկ տարվա ցմահ բանտարկության: Երեք վեպերն էլ, ելնելով իրենց հերոսներին վիճակված վճռից, ամփոփված են միևնույն «Հարյուր Մեկ Տարվան» դատապարտվածությունը խորհրդանշող խորագրի տակ:

Հակոբ Օշականի գլխավոր նպատակը «Հարյուր Մեկ Տարվան» եռագրությունում ոչ թե թուրքի դեմ ատելություն սրելն էր, այլ նրան ամբողջովին բացելը, ծանաչել տալը, նրան վերլուծելը:

Օշականը հավատում էր, որ թուրքին գրականության միջոցով ներկայացնելը, նրա էության խորքերը գեղարվեստորեն բացահայտելը օգնելու էր հայերիս, ոչ միայն ծանաչելու մեզ կոտորողներին, այլև ստիպելու էր մեզ անդրադառնալու նաև այն սխալներին, որոնք մենք գործել էինք այդ նույն թուրքի տիրապետության տակ ապրելով առանց նրան ծանաչելու: («Հայ-թուրք հարցը միայն արեան հարց չէ, այլև՝ իմացականութեան» («Համապատկեր», հ. 10, էջ 104), գրում է նա և օգնում մեզ իմացականորեն ծանաչելու մեր դարավոր հարևանին, մեզ իշխողին և մեր ջարդարարին:

Օշականի միտքը ամբողջովին ծանրաբեռնված էր իր ժողովրդի անցած տաժանակիր տառապանքի, նրա կրած աննկարագրելի զրկանքների իրողությամբ: Իր յուրաքանչյուր վեպում այդ տառապանքի ցավն ենք զգում, շոշափելիորեն տեսնում նրա սրտի երբեք չխամրող կսկիծը իր ցիր ու ցան եղած ազգի ծակատագրի հանդեպ: Այդ ծակատագիրը խաթարողը թուրքն էր, որի բռնության ու ստորացման լուծը ինքն էլ էր մանկուց ծաշակել և իր ազգի հետ կրել նրա արյունոտ սրի ահավոր սարսափը:

«Մնացորդաց», «Մաթիկ Մելիքխանյան», «Հաճի Մուրատ», «Ծակ պտուկը» վեպերում հայի կյանքի հարյուրամյա տառապանքի հետ դրա հիմնական պատասխանատունը՝ թուրքն է անվերջ հառնում, հային աստիճանաբար վե-

րացնելու, իր այդ մշակված ծրագրի իրականացման նպատակասլաց չարադետ գործելակերպով:

Նշյալ վեպերում հայի ընդերքի բացահայտման, նրա անցյալի պահպանման կողքին, որպես մեծ մտածող, նա պարտավորված էր զգուժ առանձին վեպ հատկացնելու թուրքական կայսրությունը ստի, բռնության, ոճիրների ու կեղծիքի վրա հիմնած ու հաստատած, հային բնաջնջած, թուրք ազգի ընդերքն էլ նույն խորությամբ բացահայտելու:

Օշականի մտածումը հետևյալն էր՝ «Կուզեմ, որ լրբութիւնը, նենգութիւնը, վայրագութեան ու կեղծիքի հոյակապ խառնուրդ թրքական փոլիթեքան չանցնի աննշմար մերիններէն: Ու չանցնի աննշմար այն միւս աշխատանքը, որով այդ նենգադաւ գործունէութիւնը անոնք կը հանեն դեպի ազգային, քաղաքական առաքինութիւն»: («Սուլէյման էֆէնտի», էջ 23): Իր որակավորումով «այն միւս աշխատանքը» նրանց գործած ջարդերի հերքումն էր:

Դրա համար պետք էր, անհրաժեշտ էր ներկայացնել թուրքին իր ամբողջական բնազդներով, մինչև իսկ իր խելքով, որը ըստ վիպասանի անկեղծ հետևության, հայերս միշտ արհամարհել ենք: «Կրնանք հավատալ, թէ ամէն թուրք ջարդարար մըն է, բայց կը վարանինք ընդունիլ, որ թուրքը խելք ունենա, ըլլայ քաղաքագետ» (Նույն տեղում):

Ի վերջո այդ խելքով էր նա դարձել այն ժողովուրդը, «որը խաբեց աշխարհը, ոխերիմ թշնամիների հետ անգամ լեզու գտնելով» (Նույն տեղում):

Ուրեմն պետք էր գրականության էջերով ի մի բերել թուրքի ամբողջական նկարագիրը: Թեև հայը ուզում էր «Մոռնալ, մոռնալ այն ամէնը, զոր Օշական կը յամառի թարմացնել: Մոռնալ մանաւանդ զարհուրելի թուրքերը» («Համապատկեր», հ. 10, էջ 234):

Իսկ «մոռնալ» կնշանակեր ջնջել կատարված զարհուրելի աղետը մեր հիշողությունից: Հիշողության կորուստը Օշականը մահացու էր նկատում ազգի ապագայի կերտման համար: Անհրաժեշտ էր ժամանակ ու հոգի ներդնել, թեկուզ մեկ անգամ ևս ծանրորեն ապրելով արդեն ապրվածը, որ ամբողջանար նաև մեր պատմությունը:

Օշականն աստիճանաբար էր հասնելու այդ ամբողջացմանը, ծրագրելով այն ավարտել, ինչպես նշեցինք՝ «Դժոխքով», որը իր մեծ ծրագրի՝ եղեռնի, ծավալուն պատկերն էր ընդգրկելու և որը վստահաբար դառնալու էր թուրքի և նրա քաղաքականության բացահայտման լիիրավ պատկերը:

Այդ աստիճանական զարգացման հասնելու ընթացքին նա ստեղծում է նախաեղեռնյա թուրքի պատկերը, որը մեզ լայն պատկերացում է տալիս եղեռնը իր անպարագծելի ոճիրներով իրագործած ազգի մասին: Դա «Սուլէյման էֆէնտի» վեպն է, եռագրության շարքի վերջին վեպը, նույնպես գրված Կիպրոսում, 1928-1934 թթ.:

Օշականի Կիպրոսում ապրած ութ տարիները իր ստեղծագործության ամենաբեղուն շրջանն է համարվում: Այդ տարիներին է նա գրել իր գլուխգործոցները՝ «Մնացորդաց»-ը երեք հատորով, «Ծակ Պտուկը», «Հայրուր Մեկ Տարվան» խորագրի տակ ամփոփված «Հաճի Մուրատ», «Հաճի Ապտուլլահ», «Սուլեյման էֆենտի» երեք վեպերը և առանձին «Մաթիկ Մելիքխանյան», «Սահակ Պարգեւեան» վեպերը, նաև գրականագիտական բազմաթիվ գործեր:

«Սուլեյման էֆենտի» վեպը նույնպես տպագրվել է Բոստոնի «Հայրենիք» և Կահիրեի «Հուսաբեր» ամսագրերում: Առանձին գրքով հրատարակվել է Օշականի ծննդյան 100-ամյակի առիթով Բեյրութում 1985 թ.:

1996 թ. այն վերահրատարակվել է կրկին Բեյրութում, «Հարիւր մէկ Տարուան» խորագիրը կրող երկու վեպերի «Հաճի Մուրատ»-ի և «Հաճի Ապտուլլահ»-ի հետ:

Այս վեպը համեմատաբար քիչ է հայտնի մյուս վեպերի համեմատ: Այնինչ այն եռագրության հիմնաքարն է: Առանց այս վեպի պիտի չամբողջանար նախաեղեմնյա թուրքի դիմագիծը, խորագրի հղած պատգամը, հեղինակի ողջ ասելիքն ու նպատակը:

Հետաքրքիր կառույց է տվել վեպին Օշականը, իր նախորդ գործերին և նման, բայց միաժամանակ տարբեր բանալի օգտագործել ավելի ընդգրկուն ու մեծ առումով այն բանալու և հրամցնելու համար:

Խորագրի նախորդ երկու վեպերի՝ «Հաճի Մուրատ», «Հաճի Ապտուլլահ»-ի պես, այս վեպն էլ սկսում է բանտում, երիտասարդ Սուլեյմանի գործած ոճրի և դրա վճռի 101 տարվա բանտարկության դատապարտված նրա վիճակով: Սակայն այս վեպը նա բացում է շատ հետաքրքիր ձևով, բոլորովին տարբեր իր նախորդ վեպերից:

Նա ներկայացնում է ոչ միայն ոճրագործին, նրա ոճրի պատմությունը, նրա կենսագրությունը մինչև ոճրի իրագործումը, ինչպես իր նախորդ վեպերում էր, այլ ետ է գնում դեպի վեպի հերոսի արմատները և առաջնորդում է մեզ ոճրի բուն ազդակները ստեղծած իրավիճակներին ծանոթանալու, հասկանալու ոճրի իրական պատճառը, ստեղծում մի մեծ կտավ ոճիրը իր հարազատ միջավայրում տեսնելու:

Իր այս ձևի մեջ կրկին տեսնում ենք մեծ հոգեբանին, որը գտնում է կատարված դեպքերի, իրադարձությունների, մարդուն ոճրի գործողությունների մղող հիմնական բուն ազդակները, ոչ միայն իր պատմությունը հրամցնելու, կամ թե արդարացնելու համար մեղապարտին, այլև բացատրում, շեշտում է ցեղի, արյունի, հասարակարգի և օրենքների ազդեցությունը անհատի, մարդու, ժողովրդի, ազգի կազմավորման, նրա մտածելակերպի ու հոգեբանության, նրա էության վրա:

«ես գինքը գտա իր նկուղին մէջ, -գրում է Օշականը.- պատանեկան փորձանքի մի գծով, որ Համիտի ռեժիմին կրնար գտնել ամեն հայ պատանի: Լսեցի իր ուղիքը իր բերնէն: Հետո լրացուցի անոր տեքորը անձնական պրպտումով բանտէն դուրս» (էջ 22):

Վեպը բաժանված է չորս մասերի, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է վեպի առանձին և շարունակական պատմությունը, այսինքն՝ այն «տեքորը», որը անձնական պրպտումով գտել էր հեղինակը:

Վեպի առաջին մասում գլխավոր հերոսն է, որը հետո դառնում է եմթահերոս, իր ուղիքի հիմնական պատասխանատուի՝ իր հոր կենսագրականի բացահայտումով և ուղիքի բացահայտումով ծուլվում նրան, դառնում մեկ կերպար:

Վեպի սկզբում երիտասարդ բանտարկյալի կյանքն է մինչև բանտ ընկնելը: Վեպի հաջորդ երեք բաժիններով է ներկայացվում նրա հորը, որը միաժամանակ դառնում է վեպի կենտրոնաձիգ դեմքը և վեպի դեպքերը զարգացնում է նրա շուրջ, նրան դարձնում կենտրոնական գործող անձ: Միայն վերջաբանի վերջին տողով բացահայտում է ուղիքն ու կատարված փաստով անսպասելիորեն ավարտում վեպը:

Վեպի բովանդակությունը հետևյալն է՝ 20-ամյա Էտհեն պէյ Զատե Սուլեյման էֆենտին բանտում է, մարդասպանների նկուղում, որն անվանում են Գաթել տանը (թրգմ. սպանդանոց): Պրուսայի Մավահանգիստներից մեկում իր մեծահամբավ, պէյի տիտղոսով հորը և նոր ամուսնացած իր իսկ կնոջը նույն անկողնում միասին տեսնելով սպանելու ուղիքով նա դատապարտված է 101 տարվա ցմահ բանտարկության:

Կայսերական պալատում իր հոր աներևակայելի հարստությամբ ձեռք բերած կապերի շնորհիվ է, որ իր գործած ուղիքի համար կախաղանին արժանի պատիժը փոխարինվել էր 101 տարվա բանտարկությամբ:

Երիտասարդ Սուլեյման էֆենտին, որը մերժել էր իր հոր տիտղոսը՝ պէյը, կցել իր անունին, ուսում առած, հղկված, բարեկիրթ ու գեղեցիկ արտաքինով, առաջադեմ ու համարձակ, բանտարկյալների հարգանքն ու սերը վայելող այն հազվագյուտ մարդասպաններից է, որը ամենայն արժանապատվությամբ է կրում իրեն վիճակված ծակատագիրը: Դպրոցական առաջին իսկ տարիներից նա աչքի է ընկել իր անհատականությամբ: Միշտ եղել է ինքն իր մեջ քաշված, մեկուսացված, երբեք աչքի չի ընկել շրջապատի թուրք տղաներին հատուկ ամբարտապանությամբ:

Մոր կարգադրությամբ ու պնդումով, հոր այլասերված ապրելակերպից թուրք գավառային պէյին հատուկ, նրան զերծ պահելու համար, փոքր տարիքից գիշերօթիկ դպրոց է ուղարկվել:

Նա ամենայն քնքշանքով ու բացարձակ սիրով կապված է եղել իր մորը,

որը իր կյանքի գնով փորձել է հնարավորին չափ մարդկային բարձր արժանիքներով մեծացնել նրան:

Հայրը, անպատմելի ուժերով գնով հարստացած, կոյուղի մաքրող գնչուի որդուց Քել Էտիեմից (թրգմ.- քաչալ Էտիեմ) հասել էր մինչև պեյուղյան տիտղոսին, դարձել Էտիեմ պեյ, բացարձակ անգրագետ ու տգետ, մարդկային ամենաստոր, հրեշային հատկություններով օժտված մի արյունարբու բռնակալ, ուժազործ, սնդիկ ավազակ անվանումով, որի կյանքին, էությանը ամբողջապես ծանոթանում ենք վեպի երկու ստվար մասերում: Միայն դպրոցական արձակուրդներին տուն վերադարձած երիտասարդ Սուլեյման էֆենտին գիշերօթիկում մեծանում է բոլորովին անտեղյակ իրենց մեծահարուստ դղյակում կատարվող հոր սպանություններից ու բռնաբարություններից, իր մոր վրա գործադրած նրա անմարդկային բռնություններից, նրա վարած անբարո սանձարձակ ուժազործի կյանքից:

Նրա մայրը՝ Սերվինազ հանըմը, Պոլսից Պրուսա աքսորված փաշայի աղջիկ, որն իր ուսումն ու հղկվածությունը ստացել էր Պոլսի բարձրագույն դպրոցներում, զոհ է դառնում Էտիեմ պեյի նրա մոր դեմ լարած թակարդին: Քանի որ Էտիեմը տեր էր դառնում իր ցանկացած կնոջն ու աղջկան, կամ ցանկացած որևէ բանի, տապալելով ամեն մի արգելք, այն է դնում աքսորված փաշայի գեղեցկությամբ հռչակված կնոջը՝ Նայիլե հանըմին, որին տիրանում է՝ սպանելով նրա ամուսնուն: Դեռ ավելին, տեսնելով նրա դեռահաս աղջկա՝ Սերվինազի գեղեցկությունը, ծրագրում է ամուսնանալ աղջկա հետ և միաժամանակ մորն էլ ունենալ: Հատկապես, երբ իր կրոնքն էլ թույլ էր տալիս ունենալ այնքան կին, որքան կարողությունն էր տերում: Իսկ իր նման ավազակի կարողությունը օրեօր առասպելական չափերի էր հասնում: Սերվինազը իր կանքին հակառակ ամուսնանում է բռնի կերպով, ազատվելու համար այդ ավազակի ահաբեկումներից, բոլորովին անտեղյակ նրա նենգ ծրագրից: Ամուսնության առաջին իսկ պահից, զգված նրա գռեհիկ էությունից, մնում է միայն կնոջական իր հարկադիր պարտականության մեջ, զավակ ունենում, և իր զավակին՝ իր որդուն է նվիրաբերում իր ողջ սերն ու կյանքը: Հետո նա հայտնաբերում է իր մոր և ամուսնու կապը, մեծ ցավով ջնջում է մորը իր հոգուց և բոլորովին միայնակ մնալով էլ ավելի է կապվում, նվիրվում իր որդուն, փորձում նրան ամեն կերպ պաշտպանել հրեշ հոր աղտոտություններից:

Շուտով մեռնում է Սերվինազի մայրը՝ Նայիլե հանըմը, ավելի ծիշտ, խեղդամահ է լինում ծննդաբերության ժամանակ, աղջիկ զավակ ծնելով միևնույն ամուսնուց՝ Էտիեմ պեյից: Այդ աղջկան էլ ուղարկում են Պոլիս, հոր անբարո հայացքից նրան էլ հեռու պահելու համար: Հավակները մեծանում են ոչ միայն ոսկով ու հողերով հարուստ, առատ, այլև ուժերով ու բազում բռնաբարություններով ողողված տնից հեռու: Իսկ տանը իր մեռնության մեջ մաշվող

Սերվինազ հանըմը ապրում է ինքն իրեն կտրած իր ավազակ ու ոճրագործ ամուսնու կապերից:

Արձակուրդի եկած Սերվինազ հանըմի որդին և ջույրը, այսինքն՝ իր ամուսնու աղջիկը Սերվինազի մորից՝ Նայիլե հանըմից, խալիտե հանըմը, որն արդեն արքունքի տարիքի մեջ է, գրավում է ավազակ էտիեն պեյի ուշադրությունը: Դա նշանակում էր, որ նա տիրելու է այդ աղջկան: Իր կրոնքը թույլատրում էր ամուսնանալ իր աղջկա հետ անգամ: Բայց իր որդին անտեղյակ հոր ոտնձգումներից, ինքն էլ է սիրահարվում իր խորթ քրոջը, դա էլ էր թույլատրելի իրենց կրոնքում:

Մայրը՝ Սերվինազ հանըմը, պատահականորեն տեսնելով իր ամուսնու և իր դեռահաս քրոջ՝ խալիտե հանըմի համբուրվելը, ահաբեկում է ամուսնուն, որ մինչև թագավորը կրողոքի, եթե նա պղծի աղջկան: Ամուսինը՝ էտիեն պեյ ոճրագործը, որը սովոր չէր որևէ արգելքի, հատկապես կնոջից եկող, ո՞վ էր կինը այդ դարում թուրքի համար, վճռում է պատժել նրան: Մտնում է նրա առանձնասենյակը, հարձակվում փխրուն, փոքրամարմին, ուժասպառ իր կնոջ վրա և գործադրում թուրքին յուրահատուկ գազանությունը, նրա արգանդի մեջ թխնում եգիպտացորենի կոճղ, հետո ոտքերի տակ նետելով ծեծում: Կինը կիսամեռ փրկվում է, բայց ամուսնու այդ արարքի, իրեն մահվան դուռն հասցրած վիճակի մասին չի հայտնում որևէ մեկին, ոչ անգամ իր համար մղկտացող իր որդուն: Որոշ ժամանակ անց մահանում է Սերվինազ հանըմը: Որդին՝ երիտասարդ Սուլեյման էֆենտին, ամուսնանում է իր քրոջ հետ՝ անգիտակից հոր ոտնձգումից: Յոթ օր տևած հարսանեկան մեծահարուստ, ծովս ուրախությունից հետո, նա իր հորը, նույն գիշեր, գտնում է իր նորապսակ կնոջ անկողնում և երկուսին էլ տեղն ու տեղը սպանում:

Վեպն ավարտվում է այդ սպանությամբ:

Հունական ողբերգություն հիշեցնող այս վեպի բովանդակությունը մեզ է հրամցվում բոլորովին նոր, թարմ գրելաոճով:

Հեղինակը ստեղծել է մարդկային բնավորության, մտածելակերպի, ժամանակաշրջանի, հասարակարգի, պետության վարչաձևի, գործող օրենքների, ժողովրդի, ցեղի, սեռի մի փոթորկահույզ օվկիան, որի ալեկոծումները հասցնում է մի բարձրակետի, ուր մի հարվածով ջնջվում է ամեն ինչ:

Ինչպես ասացինք, վեպի առաջին մասում երիտասարդ Սուլեյման էֆենտին է թրքական բանտի Սպանդանոց կոչվող նկուղում: Անունն արդեն պատկերում է նրա վիճակի ծանրությունը՝ որպես ցմահ դատապարտվածի: Սակայն նրա վիճակը շատ է տարբեր Հաժի Մուրատի նույնպես թուրքական բանտում ցմահ դատապարտված վիճակից: Թեև Օշականը այդ համեմատությունը խնդրո նյութ չի դարձրել, այլ իր երեք վեպերի հերոսներին նույն՝ 101 տարվա ցմահ բանտարկության դատապարտելով:

Մինչ Հաճի Մուրատին, որպես հայի, բանտում աննկարագրելի չարչարանքների են ենթարկում, Էտհեմ պեյը շրջապատվում է հարգանքով ու սիրով:

Այստեղ հեղինակը մեկ այլ խորը դիտարկում է անում: Երիտասարդ դատապարտյալը, Սուլեյմանը, որը մինչ բանտ ընկնելը սիրվել է միայն մոր կողմից, առանց շրջապատի գուրգուրանքի, նույնիսկ առանց հոր սիրույն, իր հանդեպ սերը մա այժմ վայելում է բանտում իր բախտակիցներից: Սա այսօրվա հոգեբանների ուսումնասիրության հիմնական հետախոյանքների կարևոր կետերից է, երբ հանցագործը սիրո գուրգուրանքից զերծ է մեծանում: Բայց դա թողնենք հոգեբաններին, իսկ մենք շարունակենք վեպի քննությունը:

Օշականը ներկայացնում է ուսում առած, իր կրթությամբ ու բնավորության ազնիվ գծերով բոլորի հարգանքը վայելող դատապարտյալին՝ Էտհեմին, որը հիմարություն ու միամտություն էր ունեցել ոճիորը գործելուց հետո ինքնակամ ոստիկանությանը հանձնվելու: Նրա բարոյական այդ հատկանիշը և հատկապես նրա կրթության պատկերը ամբողջովին ընթերցողին պարզելու համար, Օշականը իրեն հատուկ զննողականությամբ, մանրամասնորեն վերլուծում է կրթությունը իր մեջ ամփոփող հատկանիշները, վերլուծում ոչ միայն այս երիտասարդի, այլ մի ամբողջ ժողովրդի, մի ամբողջ պետության կրթության լրջությունը, խորությունը, որը և մտածել է տալիս ընթերցողին, թե արդյոք կրթությունն ստացած թուրքերը փոխվել են իրենց հոգեբանությամբ:

Սուլեյման էֆենտին, դատարանում՝ իր պաշտպանության ժամանակ, քննադատել էր իր ապրած հասարակարգը, փտածության ու այլասերումները բացահայտող կրակոտ ծառերով էր շահել իր հարգանքն ու անունը բանտում և բանտից դուրս: «Անոր որակումները իբր տարազ որդեգրուած էին բանտին անգիր տարեգրութեանց մեջ» (էջ 20):

Վիպասանն այստեղ բավական համարձակ քայլի է դիմում: Նա մեղապարտին առանձնացնում, մինչև իսկ տիրող հասարակարգի դեմ հանելով, անջատում է նրան այդ նեխած շրջապատից և հակադրում հորը: Միաժամանակ շեշտում, որ, ոճրագործի ծնունդ լինելով, պարզապես նույն ոճրագործ իշխանությանն էր մերկացնում, ուստիև կախաղանի չեն դատապարտում: «Բռնական վարչաձեւերու վարձատրութիւնն է ատելի ըլլալ, նոյնիսկ գիրենք կանգուն պահողներէ» (նույն տեղում):

Իսկ «գիրենք կանգուն պահողները» Էտհեմ պեյի պես ոճրագործ ավագակներն էին: Սա էր ժամանակաշրջանի ոգին: Դա այն նույն ժամանակաշրջանն էր նաև, երբ դպրոցներում դասավանդում էին միայն այն, ինչ հաճո էր վեհապետին, այսինքն՝ այն ամենը, որն առնչվում էր ցեղային ազդակները

զարգացնելուն: Իսկ թուրքերի ցեղային ազդակները դեռ մնում էին իրենց նախնական վիժակում, ինչպես հեղինակն է իրավացիորեն դիտում՝ «Ամսվազն քսան մը բիւր դարերու վրայ մորթող եւ ուտող բնազդներ չեն կուրմար չորս-հինգ դարու հակազդեցութիւններով» («Համապատկեր», հ. 10, էջ 181):

Եվ Օշականը մի կողմից Սուլեյման էֆենտիի կրթության, այդ միջավայրում նրա մարդկային արժանիքների հղկվածությունը պարզելու, մյուս կողմից իր միջամտիվ վերլուծում հարցադրումներով, ներկայացնում է բռնապետության ուսման բնույթը:

Պատանի Սուլեյմանին դնում են գիշերօթիկ դպրոց՝ հեռու պահելու համար ընտանեկան այլաճղակ մթնոլորտից, մինչդեռ պարզվում է «Դշխեմ ծակատագրութեամբ մը, դպրոցը գրեթէ կրկնեց անոր հորեմական միջավայրը»: («Սուլեյման էֆենտի», էջ 30):

Հեղինակը շարունակում է իր պրպտումը՝ ավելի խորանալով այս անգամ արդեն իշխանության և հասարակարգի մակարդակի մեջ:

Լուսավորված, հարցնում է նա և տարակարծիք պատասխանում՝ ո՞վ գիտէ: «Լուսավորված» էին համարվում բոլոր այն մարդիկ, որոնք դրան ունեին, որոնք պետության պաշտոնյաներ լինելով, տառաժանաչ անգամ չլինելով, հասել էին պաշտոնի, որոնք միայն կնիքով կարող էին ստորագրել: Պարզապես իրենց ջարդարարի տրեխներով ընկել էին Պոլիս ու արյուն, մահ սփռելով, բռնաբարելով և աղոթելով ընդարձակում էին իրենց ունեցվածքներն ու տարածքները: Հայր Էտհեմը իր հասած բարձրաստիճան դիրքով դրա փայլուն ներկայացուցիչն էր:

Հայրենասեր, շարունակում է իր հարցումը:

«Ամեն թուրք ատիկա է, մօրը փորին մէջն իսկ»: Քանզի նրանք համոզված էին իրենց արդար լինելուն և հայրենիքն էլ իրենց «կերտած արդարութեան» խորհրդանիշն էր:

Եվ Օշականը պրպտում է ամենակարևորը այս երիտասարդի մեջ. «Կոտորած էր թուրքը այս տղուն մէջ»: Սա հարցերից ամենակարևորն էր հեղինակի համար, ես կասեի՝ իր եռագրության առանցքը, որը վեպում կրկնում է մի քանի անգամ որպես պատմողի, որպես գործողություններին ընթացք տվողի, որպես հոգեբանի և թուրքին լավ ծանաչողի: Չէ՞ որ իր ամբողջ վիպաշարը, իր եռագրությունը ստեղծել էր թուրքը բացահայտելու նպատակով: Իսկ ի՞նչ էր նշանակում թուրք լինել:

Այդ բացահայտելու համար նա հետաքրքիր, միաժամանակ, ինչպես շեշտեցի, նորարար անցում է անում վեպում: Որդու թրքության հարցը փոխադրում է հոր վրա, ավելի լայն կենսագրության մեջ նրան բացահայտելու միտումով: Քանի որ որդին երիտասարդ էր, ընդամենը 20 տարեկան, դեռ նոր կյանք ստած, նրա կենսագրությունը հնարավորություն չէր ընձեռի ընդգրկելու այն

ամենը, որով կերտվելու էր թուրքի դիմագիծը: Ի վերջո Օշականի գերխնդիրն էր ներկայացնել մի սերնդի, որոնք հետո դառնալու էին հայերի ջարդարարները:

Այդ սերնդին բացահայտելու, ծանաչել տալու նպատակով նա ստիպված էր ավելի լայն կենսագրության և գործողությունների մեջ բացահայտել նրանց:

Իր նախորդ երկու վեպերում՝ «Հաճի Մուրատ»-ում և «Հաճի Ապտուլլահ»-ում, թուրքը մասնակի էր բացահայտված, այս վեպում նա բացում է մեծ տարողությամբ, արդեն քաղաքային միջավայրում:

Թուրքի թուրք լինելը, եթե կարելի է այսպես բնորոշել իր հարցադրումից ելնելով, ամբողջացնելու համար, Օշականը շարունակում է ներկայացնել հասարակարգի այլ իշխողներին, որոնք թեև վեպում մասնավոր անելիք չունեն, բայց այդ հասարակարգի կարևոր մասն են կազմում և դրանով իսկ հիմնական դեր խաղում ժողովրդի, այսինքն՝ թուրքի դիմագծի ձևավորման մեջ: Օշականը թրջության միջից հատկապես ընտրում է նրանց, ովքեր մասնավոր դեր էին խաղալու մեր ջարդերի ժամանակ: Չէ՞ որ դեպի այդ մեծ ընդհանրացումն էր ուղղված իր նպատակը: Ահա դրանք՝ կրկին մոլլաները, տգետ, գեհիկ իրենց ծագումը հասարակական ամենաստորին խավից, բայց այդ բանը թաքցնելով ժողովրդից, քարոզում էին սրբազան ատելությունն անհավատի դեմ: Բավական էր, որ ասվեր «կրօնքիս հայիոյեց», և քրիստոնյան արդեն կախաղանի վրա էր: Իսկ իրենց մոլլաները առիթի դեպքում պղծում էին իրենց իսկ այրիացած զինվորների որբերին, փառաբանելով փաղիշահին և աղոթելով Ալլահին՝ իրենց այդ պատվին արժանացնելու համար: Նրանց գերխնդիրը թուրքի մեջ այլ հավատի տեր ազգերի դեմ ատելություն քարոզելով, իշխանության մեջ իրենց դիրքը ապահովելն էր:

Մոլլաներին հետևում են ավագ պաշտոնյաները, որոնք պետության սյուներն էին համարվում: Ահա նրանք «քրտինքն խաշած անոնց կոպերու սայրին մեղքն ու բիծը բողբոջ կարծակեն» (էջ 45):

Հետո գալիս են զինվորական հրամանատարները. «Կնիկի պես գեղեցիկ ու իգաղեն, որոնք իրենց դիրքերը կը պարտէին միայն ու միայն իրենց դէմքին, պետական պիտոճէին եղը սոթտելու գործը կը կազմակերպէին դիւային ծարտարութեամբ» (էջ 47):

Մտավորականը՝ «Թիւով այնքան քիչ»:

Կրոնապետը՝ ծեր ու քրքրված, հոտած ու բորբոսնած:

Կուսակալը՝ «Պապենական օճախէ սրիկա»: Այսքան պերճախոս այս բնութագրումները, հարկ չկա նույնիսկ մանրամասնելու:

Եվ եզրակացությունը՝ «Այս պայմաններու մէջ աւելորդ էր միտքը», բայց իշխող էր թրջությունը:

Ո՛վ կարող էր թրջությունը այսքան բազմաբան ներկայացնել, ինչպես Օշականը: Իրական, խորը, ամբողջովին ժանաչած: Ամսպատ է նրա ասելիքը «լրբությունը, նենգությունը իրար հյուսած, վայրագութեան ու կեղծիքի հոյակապ խառնուրդ թրջական փոխթիքան» ներկայացնող իրականության մասին:

Եվ հեղինակը իր ոճին հավատարիմ, մասնակից, միևնույն ժամանակ վերլուծող ու առաջնորդ է դառնում վեպում ու բացում մեր առաջ թուրքի նկարագիրը մախ վերլուծությամբ և ապա գործողությունների ընթացքում: Եվ քանի որ երիտասարդ դատապարտյալը կյանք չեր մտել դեռ իր ցեղի հատկությունները իր հարաբերություններով, իր գործողությունով հաստատելու, նրան լրացնելու է գալիս հայրը, որի կերպարում հեղինակը խտացնում է հասարակ թուրքից, ամենաստորին դասակարգից, պէյի տիտղոսին արժանացած մի ամբողջ հասարակական խմբավորում, մի ամբողջ ժողովրդի պատկեր:

Վեպի առաջին մասն ավարտվում է երիտասարդ Սուլեյման էֆենտիի ընդհանուր նկարագրով մինչև դպրոցի ավարտը, որը մաս իր անմեղության ու մաքրության ավարտն է դառնում, «ուր ինչպէս մտած էր հոն, ելաւ դուրս քալուած՝ հաւատքէն ու հոգիէն»: Բայց այդ «քակուածը» պատմելը վեպը գործողության չէր մղելու: Եվ վիպասանը դիմում է մի հրաշալի միջոցի: Երկրորդ՝ Բ մասում, որը վեպի հիմնական գործողությունների միջավայրն է, կենտրոնական դեմք է դարձնում Սուլեյմանի հորը՝ Քել Էտիեմին, որը դարձել է արդեն Էտիեմ պեյ: Ներկայացնում է նրան անհավատալիության հասնող իր բարբարոս արարքներով: Հավանաբար եթե թուրքի մասին չլիներ նկարագիրը, ամբողջ պատմությունը կդառնար անհավանական: Այդքան պզգալի բնավորության հատկանիշներ, այդքան սպանելու, վայրագության մոլուցք մեկ անձի մեջ, իրապես դժվար ընդունելի է: Բայց քանի որ ուժիրը, ապականությունը, փառք ու գեղեցկություն էին թուրքերի մոտ, գյուղում, քաղաքում, մինչև իսկ պալատներում, բոլորովին զարմանք չի հարուցում: Մանավանդ այս եղելությունից շատ չանցած, հաջորդ դարասկզբին, մեր ջարդին, նրա կերպարի կրկնօրինակը մենք տեսնելու ենք մի ամբողջ ժողովրդի մեջ առանձին-առանձին ու հավաքականորեն:

Նա սկսում է Քել Էտիեմի կենսագրությունից, որը լեցված է անհավատալի ուժիրներով ու այլանդակություններով: Դեռ պատանի, 15 տարեկանին նա բռնաբարում ու ջրհորի մեջ խեղդամահ է անում իր խորթ քրոջը: Ծնողները իրենց և իրենց ապրած շրջանը, իրենց չարագործ որդուց փրկելու համար, բարեկամ նավապետի հետ նրան հեռացնում, ուղարկում են Պրուսայի ծովամերձ քաղաքը: Այստեղ վիպասանը ամբողջ խորությամբ պարզում է արյունից եկող արատների պատկերը: Քել Էտիեմը այդ քաղաքում սկսում է իր գոյությունը ապահովել գողությամբ, նավերի խորքերում անբարո կանանց և դեռատի պատանիներ բռնաբարելով, նրանց չարաչար մահով սպանելով

և դիվային արագությամբ իր ոճի հետքերը կորցնելով: Նրա միհար բազուկները դանակը կատարելության հասցրած վարպետ գործածությունն են ձեռք բերում, իսկ սրունքները արագավազության մեջ մարզվելով երբեք չեն ընկնում ոստիկանների թակարդը: Իր այս «շնորհների» համար նա վաստակում է սնդիկ ավազակ անունը, դառնում շրջապատի ահ ու սարսափը: Օշականը, որ անգերազանց է գործողությունները հարթ ու հղկված սահեցնելու մեջ, էջեր է տրամադրելու էտհեմի իրար հաջորդ ոճիրները պարզելով, նրան պեյի աստիճանին հասցնելու: Վիպասանը հենց այնպես, պատմելու համար չէ, որ մանրամասն ներկայացնում է այս դժոխային մարդուն իր ողջ ապականության մեջ: Նրան հասցնելու է հասարակական բարձր այն դիրքին, որին հասնում էին այդ ապականությամբ, որով և ղեկավարվում էր մի ամբողջ կայսրություն: Պրուսայի մեջ նա իր ոճիր-մախժիրների համբավով ձեռք է գցում իր ուզածը, իր կամքը թելադրում սանձարձակորեն, իրեն հնազանդեցնելով թե՛ տեղական իշխանության, թե՛ օրենքի մարդկանց: Շաբաթվա որոշ օրեր Պրուսայի հանրատները իր տրամադրությանն են հատկացվում, ուր անբարո կանայք նրա անգթության առասպելին տեղյակ, կուրորեն կատարում են նրա կամքը, իրենց թշվառ կյանքը փրկելու համար: Իր այս ոճիրների համբավով նա դառնում է գավառի ոստիկանատան հարյուրապետի զինակիցը: Հայկական ջարդերից առաջ կառավարությունը այսպիսի մարդկանց օգտագործում էր զուտ հայկական շրջաններ ուղարկելով «փափուկ» գործերի կարգադրումի համար, որի պտուղները երևան էին գալու ավելի ուշ, հայերը կոտորելու ժամանակ:

Այդ ժամանակաշրջանում, ըստ հեղինակի տված տեղեկության, Պրուսան միատարր բնակչություն չի ունեցել: Այնտեղ ապրել են հրեաներ, հույներ, հայեր, ալբանացիներ, որոնք բոլորն էլ փոքրամասնություն լինելով, ապրել են իրավազուրկ վիճակում, թուրքից հալածված ու ճնշված:

Տարիների ընթացքում ոճրագործ Քել էտհեմի բազուկների աճման հետ աճում ու ընդարձակվում է նաև իր ուժի տիրապետության սահմանները, հասնում մինչև պետական կապերը: Նրա միակ զգուշավորությունը հայերն են եղել, որոնց հետ չափվել փորձելով, հազիվ էր փրկել իր մեղապարտ կյանքը:

Օշականը այս հատվածում առիթը չի փախցնում մեկ անգամ ևս անդրադառնալու հայի և հայ ասպատակների բարոյական և ազգային, հերոսական կերպարին:

Քել էտհեմը որոշ ժամանակ միանում է հայ ասպատակներին, բայց տեսնելով, որ նրանց հետ չի կարող չափվել, «Ձգուշացավ չափուել է հայերու հետ, ոչ թե վախճալուն-անիկա կանգիտանար վախի վիճակը,-այլ բնազդով այդ լեռնական կեավուրներուն հարուածին մէջ գտնել կարծելով անողոք այն բանը, որով անհատը կը խտացնէ զատ, տարբեր ցեղէ մը զգալու աշխարհը» («Սուլէյման էֆէնտի», էջ 84):

եվ հետո մեկ տողով մույն հողի վրա ապրող երկու ժողովուրդների տարբերությունը շեշտում, ընդգծելով հայի, իր հողի վրա ապրողի, և մյուսի՝ թուրքի, գավթողի հոգեբանությունը: «Քանի-քանի անգամ զայն բռնեցին, փշուր-փշուր իր ձեռքը տուին իր բեկորները, բայց չսպանեցին զինքը, վասնզի հայ էին: Այսինքն՝ մահվան արժեքը գիտէին» (մույն տեղում, էջ 85):

Օշականը սիրում է իր վեպերի կերպարներին անուղղակիորեն իրար կապել, գործողությունների և դրանց միջավայրում հիշատակելի դարձնել մեզ ծանոթացրածը, կրկին շեշտելու համար ժամանակաշրջանն ու տարածքը, օրենքներն ու հոգեբանությունը: Այս վեպում էլ էտիկենը որոշ ժամանակ զբաղվում է նաև ծխախոտի մաքսանենգությամբ, որը իր մեջ ծնում է դրամի, ոսկու հանդեպ կատաղի պաշտամունք: Ավելի մեծ չափով դրամի հասնելու համար նա անցնում է խմբային ասպատակության:

Մինչ հայերն ու թուրքերը լեռներում իրար են սպանում, կառավարությունը զբաղված իր տուրքերի գանձումով, ամենևին չի հետաքրքրվում շրջաններում կատարվող կոդուպուտ սպանություններով: Եվ սնդիկ էտիկենը օգտվելով կառավարության ընձեռած հնարավորությունից, վարպետորեն իրականացնում է այդ շրջանի ամենահարուստ ալբանացու ինչքերին տիրանալու իր մշակած ծրագիրը: Այս ալբանացու դեմ կատարվող ոճրով հեղինակը բավական ընդարձակ տեղեկություններ է փոխանցում նաև այդ շրջանում թուրքիայում ապրող ալբանացիների վիճակից, որոնք մույնպես ձգնվում էին թուրքի բռնատիրության տակ:

Ալբանացիները իրենց երկրի խառնակություններից փրկվելու համար հունական նավերով փախչում էին Անատոլիոյի շրջանը, ուր մեծամասամբ զբաղվում էին հովվությամբ, ագարակապահությամբ կամ ոչխարաբուծությամբ: Նրանք ատում էին թուրքերին, համառորեն մերժում սովորել նրանց լեզուն և պահպանում էին իրենց բարքերը: Այս մեծահարուստ ալբանացուն, որին անուն չի տալիս հեղինակը, ավելի ընդհանրացված դարձնելու համար նրա կերպարը, առանձնացնելով իր յուրայինների ճնշված վիճակից, Օշականը շեշտում էր թուրքերի վարած ծրագրված քաղաքականությունը ոչ միայն հայերի, այլ նաև իրենցից դուրս բոլոր փոքրամասնությունների հանդեպ: Նրանք թողնում են այս ալբանացուն աներևակայելի հարստություն դիզելու, թուլատրում են նրան թուրքիո հողի վրա կառուցած ամրոցում բոլորովին անկախ ապրելու, կտրված թուրքական կյանքից, պահելով իր ազգային սովորույթները, արհամարհելով թուրքերի օրենքները: Նա իր ամրոցը կառուցում է նախահանգստից երկու ժամ հեռու, ծովախորշի ժայռերից մեկի վրա, շրջապատված անառիկ պարիսպներով: Համիդի տիրապետության ժամանակներից սկսած մի ազատ քաղաք է դառնում այդ հսկայական հեկտարներ զբաղեցնող ամրոցը: Հաճախ այն դառնում էր ալբանացի փախստականնե-

րի ամենաապահով ապաստարանը, քանի որ թուրք ոստիկանությունը իրավունք չուներ խուզարկելու այդ ամրոցը: Այդ իրավունքը և իր անկախությունը ալքանացին ձեռք էր բերել իր աղջիկներին կնության տալով կայսերական պալատ: Բացի այդ, իր անհաշվելի հարստությամբ, նա իր թանկարժեք նվերներով կաշառում և գնում էր պետության բոլոր պաշտոնյաներին: Անշուշտ պետական պաշտոնյաները ոչ մեկ պատճառ ունեին վերացնելու իրենց եկամուտի առատ աղբյուրը, մաքրելով ալքանացուն:

Բայց ունեին սնդիկ ավազակ Էտհեմին, որը թուրքին յուրահատուկ մանրամասներով մշակում և իրագործում է ալքանացուն վերացնելու և նրա հարստությունը յուրացնելու ծրագիրը: Կառավարությունը ուրախացած, որ վերջապես ազատվեց իրենց արհամարհող ալքանացուց, չի էլ բարեհաճում քննել սոսկալի պատահարը: Ժամանակի հետ խումանում է այդ անպատմելի ոճրի սարսափն էլ և մի քանի տարի անց, նույն ինքը, ոճրի պատասխանատուն՝ սնդիկ ավազակ Էտհեմը, չնչին գումարով գնում է արդեն ավերակի վերածված ամրոցի հողերը, այն դարձնում իր բնակատեղին, սոսկալի ոճիրներով ողողելով հատուկ նպատակով կառուցված այդ նորակառույց ամրոցի ներքին նկուղներն ու գաղտնարանները:

Սա մեզ հիշեցնում է համիդյան պալատի զնդաններն ու գաղտնարան տանջարանները:

Վիպասանը ոչ մեկ երևույթ հենց այդպես տեսարան լրացնելու համար չի գրել:

Նա անվերջ անուղղակիորեն մեզ տանում է դեպի ջարդերը:

Թեև այս ավազակ ոճրագործը ուներ ոսկով իր ցանկացածին տիրանալու բոլոր կարելիությունները, բայց քանի որ իր արյան բաղադրության, իր բնության մասն էր կազմում բռնությունն ու սպանությունը, լլկում և ահաբեկումը, նա հաճույք էր ստանում այդ ամենի իրագործումով: «Բոլորովին յամառները կապուեցան մարմար սիւներու, մերկացուեցան իրենց զգեստներէն, մագործի դանակներով գրեթէ սեւամորթ արջերու կողմէ ու այսպէս, քրիկ-քրիկ ձգուեցան կիսավայրի այդ մարդոց կիրքերուն: Անոր կամքին ընդդիմացող կիները պատժուեցան չարաչար: Այդ կիներուն դիակները գիշերով կիջնէին ծով, վիզներուն երկաթ ծանրոցներ: Չուկերը կը մաքրէին ոճիրը» (նույն տեղում, էջ 113):

Ահա սա էր ավազակ Էտհեմի կյանքը, որի բոլոր ոճիրները, ինչպես նշեցինք, պաշտպանվում էին ոստիկանության, քաղաքային վարչության, պետական բարձրաստիճան անձերի կողմից:

«Արդարությունը զգուշացած էր միջամտել անոր գործերուն հազարումէկ նկատումներով»: Եվ շարունակությունը էլ ավելի ընդարձակ պատկերացում է տալիս նույնքան ոճրագործ կառավարության ու տիրող օրէնքների մասին:

«Ըրեր» ավելի գեշ բան մը - նուիրագործելով ինչ որ սահմանուած էր արմատացի քանդուելու, տիտղոսելով, պաշտպանելով, փառաւորելով ու պետական գնահատման առաջնորդելով զազրելի ոճիրը» (էջ 238): Իսկ պետական գնահատումը, ինչպէս գիտեք, դառնում է պէյի կոչումին արժանանալը:

Ավագակ էտիէնի պաշտամունքը դառնում է կիրքը, սեռային տարփանքը, որի հագեցումի համար նա երգվում է՝ «չընկրկիլ ոչ մէկ արգելքէ»:

Քանի որ խոսքը սեռի մասին է, Օշականը այս վեպում էլ, նախորդների պէս, բացում է սեռ ու կիրքը, թուրք տղամարդու կյանքի հիմքը, նրա անհատում անխորժակը կին առնելու, որոնք «քանի յառաջանան տարիքի մէջ, այնքան մատաղատիները կընտրեն»:

Տղամարդու կրքի, սեռական գոհացման համար ներկայացնում է կնոջ դիրքը, վիճակը, նրա հոգեբանությունը, նրա տեղը որպէս անձ տղամարդու աչքում և հատկապէս տվյալ հասարակարգում:

Նախորդ վեպերի պէս այստեղ էլ նա շեշտում է թուրք կնոջ իրավագուրկ, ստրուկ, հետևաբար և ծայնագուրկ վիճակը: Այդ հասարակարգում կինը անշունչ առարկա է, որը միայն ամուսնու կրքին գոհացում տալու և արու զավակներ ծնելու համար է ստեղծված: Այստեղ էլ տեսնում ենք Սերվիմագ հանըմին, որը ատելով հանդերձ իր ամուսնուն, կրկին անծպտուն կազմ ու պատրաստ գոհացնում է իր ատելի ամուսնու սեռային կարիքները: Քանի որ օրենքը թույլատրում էր տղամարդկանց մեկից ավելի կին ունենալ, կանանց վիճակը էլ ավելի էր վատթարանում: «Ամէն մէկ միքեահ (թրգ. հարսանիք) տունին մէջ կը ստեղծէր լռին ձգտում ու սիրուհիներուն մէջ բուռն իրարանցում: Էջեր պետք են այդ ընտանիքներուն պատկերը մօտաւոր սեւեռումով մը թուղթին յանձնելու» (նույն տեղում, էջ 171):

Նախորդ «Հաճի Ապտուլլահ»-ում արդեն ծանոթացանք թուրք կնոջ ամենօրյա այդ ապրումներին, նրանց ամեն ժամ ամուսնու ցանկությունից կախյալ, անապահով, ամեն վայրկյան դուրս վնդդվելու սարսափահար վիճակին: «Թուրքերուն ընկերութիւնը այնպէս է կազմուած, որ կիները մնան անոր լուսանցքին ու բաժին չառնեն կեանքին մեծ խաղերէն» (էջ 173): Քանի որ տղամարդկանց է իրավունք վերապահված բաժին առնելու կյանքի մեծ խաղերէն:

«Պաշտօնապէս, տօնական գիշեր մը խալիֆան տասնեւհինգամեայ աղջիկ մը կառնէր: Անպաշտօն՝ ամէն շաբթու» (նույն տեղում, էջ 171):

Այս ամենը իր ազատությունն էր գտնում ոչ միայն կանանց սարսափից ծնված հոժարությամբ, այլ «ընկերության բարեհաճ հաւանութեամբը»:

«Կառնեն կին, ուզածնուն չափ ու քանի մը տարին անգամ մը բնագոյաբար կը թարմանան: Տարօրինակ արձակությունը այդ բարքերուն, իր նախնական տարրական կապերուն մէջ այնքան ալ մօտ, յարմար՝ այդ ժողովուրդի ուղեղին, որ կեանքը կը տեսնէ սեռին ու արիւնին ակնոցով (նույն տեղում, էջ 173):

Էտիեն Կեյը այդ վայրագ ժողովրդի հիմնած կայսրության հարազատ ներկայացուցիչն էր, ուր Սուլթանները իրենց ուղքերը լվանում էին իրենց եղբայրների արյունով: Դեռ վաչկատուն բնագոյներով էր առաջնորդվում մի ամբողջ կայսրություն: Ահա թե ինչու իր գործած ու գործող ոճիրների դիմաց նա ոչ թե պատժվում, այլ ստանում է Կեյի կոչում, որով էլ ավելի է մեծանում իր անպատիժ ոճրի գործողության դաշտը: Բնականաբար Կեյի համբավը նրան դարձնում է էլ ավելի սանձարձակ ու էլ ավելի անհագուրդ իր փսրոժակներում և ամենակարևորը՝ իրեն դարձնում անձեռնմխելի օրենքի առջև:

Նա վարվում է այնպես, ինչպես այդ պահին թելադրում է ոճրով սնվող իր ուղեղն ու ցանկասիրությունը: Սառնասրտորեն գործած բազում անասնությունների մեջ վեպում առանձնանում է, ընթերցողի մտքում անջնջելիորեն տպավորվում Սերվինագ հանըմին, լլկելու տեսարանը. «Ե՛րբ այդ կախարդուած ու անիծուած առարկան (խոսքը եգիպտացորենի կոճղի մասին է), պիտի ցատկեր Էտիեն բէյի ավիին մէջ, հոնկէ թխմուելու համար կնոջը արգանդին: Պաղարին, զգաստ, անաղմուկ, անողոք, հանց, բռնի, արիւնով թաթախ կոճը ու նետեց պատուհանէն դէպի ծով: Յետո, ուղքերով սկսավ ծծօր: Ուրքա՛ն: Ինք պիտի մոռնար: Ծծօնէ առաջ նուաղած կինն ալ պիտի չյիշէր ատիկա: Ու ելավ դուրս, քիթէն կախ երգի մը պոչը: Հինգմեկնոց կախեն մարմար քու վզին» («Սուլէյման էֆէնդի», էջ 220):

Կարծում եմ, թեք ոչ մեկ այլ ոճրագործություն արած չլիներ նա, այս մեկ տեսարանը բավական էր նրա թրջությունը հաստատելու: Ոչ շատ հետո, ամբողջ ոհմակներով էին նրանք կրկնելու այդ լլկումները մեր անպաշտպան ժողովրդի վրա և՛ դարասկզբի՝ 15-ի Արևմտահայաստանի ջարդերին, և՛ դարավերջին՝ Բաքվի ու Սումգայիթի ջարդերին:

Օշականն իր հերոսի ոճրագործությունները այսպես, աստիճանաբար, հանգրվանների բաժանելով է մեզ հրամցնում, ավելի շեշտելով նրա արյունից եկող ոճիրով ապրելու ազգային խառնվածքը:

Յեղային մեկ այլ հատկություն է նաև Էտիեն Կեյի հետևողականությունը իր նպատակակետին հասնելու նրա կենտրոնացած աշխատանքը: Նայիլե հանըմին ձեռք ձգելու համար նրա օգտագործած միջոցները կրկին անգամ համոզում են մեզ Օշականի՝ կնոջն ու տղամարդուն, նրանց հոգեբանությանն ու մտածելակերպին ամենայն խորությամբ ծանոթ լինելու իր զարմանալի կարողությանը և այդքան մանրամասնորեն, գեղարվեստորեն մեզ մատուցելու նրա տաղանդը:

Այստեղ տեղին է հիշեցնել, որ հեղինակը Նայիլե անունը օգտագործել է երկրորդ անգամ, իրար հաջորդ վեպերում՝ «Հաճի Ապտուլլահ»-ում առաջին անգամ և այս վեպում: Բայց այս երկու կերպարները իրենց բնավորության գծերով ամենևին էլ իրար նման չեն, միայն ձակատագրով է, որ վերջում նույ-

նանում են, երկուսն էլ սպանվում են ամուսինների ձեռքով: Հավանաբար Նա-
յիլե անուընդ տարածված և սիրված անուն է եղել թուրքերի մեջ, և Օշականը
այդ պարզ առումով է այս վեպում էլ օգտագործել:

Վեպում Նայիլե հանըմին առաջին անգամ հանդիպում ենք արդեն այն
դարձած ավազակի նրան ունենալու համար ստեղծած ծուղակի մեջ ընկնե-
լիս: Միջնորդ պառավներին օգտագործելով, հեքիաթային հով ունեցող մի-
ջոցներով նավակով, մշուշի միջով, գաղտնածածկ ժամապարհով իր պալա-
տը նրան բերելուց հետո, ընթերցողի համար թվում է արդեն գիտե դեպքի
վերջավորությունը, նույնիսկ ցավ է զգում նա այդ ամենը արարածի հանդեպ,
այդքան հեշտորեն ոճրագործի զոհը դառնալու համար: Բայց հանկարծ ամեն
ինչ այլ ընթացք է ստանում:

Օշականի վարպետ գրիչը դարձյալ շրջադարձում է վիժակները և բա-
ցում հոգեբանական նոր բավիղներ: Այդ գեղանի, համարձակ, իր ամուսնուն
սիրող կինը ոչ միայն չի ենթարկվում իր գազանությամբ անվանի այս մար-
դասպանին, այլ համարձակվում է նրա երեսին շարտել իր բացահայտ ատե-
լությունը նրա անձի և նրա գործելակերպի վրա: Ի զարման Նայիլե հանըմի
և նույնքան զարմանալի ընթերցողի համար, մարդասպանը «զգացված» այդ
անկեղծությունից, ազատ է արձակում հանըմին: Առաջին հայացքից անհա-
վանական, Նայիլե հանըմի մուտքի պես հեքիաթային թվացող այս փոփո-
խությունը Օշականը այնպիսի ճշմարիտ, բնական, կյանքի փորձառությունը
ընդգրկող փաստարկներով է բացահայտում, այնքան գիտակ մարդկային
երկու սեռերի ներքին ծայներին, որ ոչ միայն համոզում է ընթերցողին, այլ
հիացնումք առաջացնում այս խորը մեկնաբանի հանդեպ: «Մեղք, որ վէպ
է անուընդ սա պատմութեան: Ու Արեւելքը՝ անծանօթ Արեւմուտքին: Ու սե-
րը՝ հիմա արժեզուրկ ապրանք: Ու կինը՝ միշտ կին» (նույն տեղում, էջ 157):
Իրական, շնչող կյանքն է մեր առջեւ: Իրապես ափսոս է այն վեպ կոչելը: Սա
պարզապես կյանքից մի մեծ դրվագ է, որը կարծես ոչ թե կարդում, այլ տես-
նում, ապրում ենք:

Իր գրչի կախարդանքով շարունակում է մարդասպանին ծնկի իջեցնել Նա-
յիլե հանըմի առջև, նրա ոտքերը համեստորեն համբուրելով հետաքրքրու-
թյուն, ինքնական մղում առաջացնելով հանըմի մեջ հանդեպ այս կանանց բո-
լոր թույլ կողմերը անգիր սերտած ավազակը:

Օշականը գիտե, ծանոթ է մարդկային ներքին բոլոր թաքուն զգացում,
զուր, կիրք, շարժող բավիղներին և հատկապես կանանց ներսում: Նվ պատա-
հական չէ իր հարցում-պատասխանը:

«Ու՛ր կերթան կիները, երբ կը հալածուին պատկերներէ ու կը քաշուին
նման լարերէ: Մեր դէմիները սրբագրած ատեն, անգիտակցաբար սրբա-
գրած կըլլանք նաեւ մենք մեզի» (նույն տեղում, էջ 157):

Նայիլեն նույնիսկ մեղսակից է դառնում իր ամուսնուն սպանելու նույն մարդասպանի ծրագրին:

Շարունակությունն արդեն գիտենք, որ նա հավատալով այդ մարդասպանի ազնիվ գծերով օժտված լինելուն, կուրացած իր մեջ նրա հանդեպ արթնացած կանացի կրքից, ոչ միայն իրեն, այլ նաև իր աղջկան՝ Սերվիմագին է դարձնում այդ գազանի զոհը: «Ու գեղանի, փաշաներու արիւնը կրող ազնուական այդ կինը եղաւ տարփուտիւն կոյանոց մաքրողի մը տղուն, հիմա տնօրէն ձէժիի մասնաձիւղի մը, ականավոր անձը գազային ու դէպի փաշայութիւն առազատտ պարզած» (նույն տեղում, էջ 157):

Վեպի երրորդ և չորրորդ՝ Գ և Դ մասերում կրկին զգում ենք Օշականի հզորությունը, վեպը կառուցելու, մասերի հավասարակշռությունը պահպանելու նրա տաղանդը: Այս գլուխներում Սերվիմագ հանձնի կյանքն ու ապրումներն են, նրա կապը իր ամուսնու, իր որդու, իր քրոջ, ընտանիք կոչվող այդ համակարգի և հիմնականում էտիեն պեյի հետ:

Ամուսնության սկզբից իսկ նա խորշանք է ապրում իր ամուսնու մարդկային նկարագրի հանդեպ: Օշականը այս վեպում բացահայտում է թուրք կնոջ մեկ այլ, մինչ այդ մեզ անհայտ կողմը: Թուրք կինը ընդհանուր պատկերով մենք ծանաչել ենք իր նախորդ վեպերում, բայց նրա ապրումների խորքը այս տեսանկյունից կնոջ նախասիրության, նրա ընտրություն ունենալու ձգտումի տեսանկյունից, առաջին անգամ այս վեպով է մեզ հրամցվում:

Իր նախորդ վեպերում մենք հանդիպեցինք ազատ, իր կամքն ու ցանկասիրությունը պարտադրող Սանամին «Հաճի Մուրատում», հլու, հնազանդ ամուսնու անկողինը մեկ այլ կնոջ՝ մուլլայի աղջկա հետ կիսող Նայիլե հանձնին «Հաճի ապտուլլահ»-ում, և սրանց կողքին այս վեպում տեսնում ենք իր ատելությունն ու զգվանքը չթաքցնող, սառնությամբ ու ինքն իր վրա բռնի ուժ գործադրելով ամուսնու անկողինը մտնող Սերվիմագ հանձնին, որն այդ ոճրագործի հետ ամուսնացել էր իր կամքին ընդդեմ, ահաբեկման սարսափի և մոր պարտադրանքի տակ: «Կատեր մանաւանդ մարմնական անոր շփումը, ոսկրուտ ու գիւղացի հոտող: Կատեր իր ամուսինը արելի ուժգին անդրանիկ զաւկէն ալ վերջը: Բայց կապրեր, ինչպէս պարտքն է ընել ամէն աղջկան, որ վար է քսանէն, փէշերուն ունի զոյգ մը աղուընակ, ու անկողինին համար՝ դել մը» (նույն տեղում, էջ 162):

Վեպի այս մասում Օշականը նկարագրում է միայնակ, հարստության ու բռնության, ատելության մեջ կեղեքվող դժբախտ կնոջ տառապանքը իր որդուն գազան ամուսնու այլանդակությունից մաքուր պահելու և միաժամանակ իր կորցրած կյանքի համար:

Վիպասանը, որը գիտե ներքին ապրումները, կանացի հոգում ու էության մեջ եռացող տվայտանքները, գեղարվեստի նույն ուժով բացահայտում է Նա-

յիլե հանրմի ապրումները, երբ նա հայտնաբերում է իր մոր և իր ամուսնու անկողնային հարաբերությունը, հարևան սենյակում, իր տան մեջ: Բնականաբար աննկարագրելի ծանր պիտի լիներ այդ հարվածը քսանամյա կնոջ կյանքում, որից հետո նա ծանր հիվանդանում է: «Չմեռաւ: Բայց մահէն ետ գալը չի նմանիր մեր միւս ծամբորդութիւններուն: Ապրեցաւ: Տեսաւ կրկին իր մայրը, տեսաւ իրիկը» (էջ 165):

Որքան իմաստություն, կյանքի հաստատած փորձառություն կա տեղադրված այս հատվածում: Չարմանալի, զարմանալի խորություն է մեզ հրամցնում Օշականը իր յուրաքանչյուր գործում:

Իսկ հատվածի շարունակությունը էլ ավելի է ընդգծում կյանքը խորությամբ ծանաչելու նրա յուրահատկությունը, մարդու ներաշխարհի մինչև իսկ հակասությունները հայտնաբերելու նրա կարողությունը: Մոր խեղդամահ լինելուց հետո, Սերվինազը պիտի փնտրի մորը, իր մենակության, իր ցավագին կյանքի մեջ, իրենց երկուսին վիճակված նույն ծակատագրի դեմ իր անգոր ապրումները գոնե նրա հետ կիսելու համար: «Մենակութեան վճռական գիտակցութիւնը՝ սա պալատին մէջ: Դէմ դէմի՝ աշխարհի հազուադէպ մէկ սրիկային հետ: Դէմ դէմի մարդու մը հետ, որ հաւ մորթելու պէս կին կը մորթէր» (էջ 169): Եվ զարմանալի այն է, որ այդ հրեշը «չէր արձակեր իր կինը, անոր խնայելու համար թանկագին վայելքը, իրմէն ազատուելուն արքայութիւնը» (էջ 221): Եվ չգտնելով ոչ մի սփոփում, Սերվինազ հանըմը փարվելու է զավակին, նրան պաշտպանելու գազան հոր ավերից, համոզված, որ զավակը գերծ է ոճրագործ հոր այլանդակ դաժանություններից:

Այսպես տառապող Սերվինագի կողքին Օշականը հմտորեն վեպի մասնակիցն ու ծակատագիրը տնօրինող մեկ այլ կին է գործողության մեջ դնում՝ նրա խորթ քրոջը: Երիտասարդ, գեղեցիկ, իր ցանկություններին հազուրդ տալու մեջ անվարան, նոր սերնդի թուրք կնոջ ներկայացուցիչ Խալիտե հանըմին, Էտիեմ պեյի աղջկան Նայիլե հանըմից: Հետաքրքիր մուտքով է նա մեզ պարզում այս աղջկա կերպարը: Սկզբում նրան անվանում է պզտիկ հանըմ, որին տեսնում ենք միայն գործողությունների արանքում, առանց որոշակի դերի, քանի որ նրա դերը տան մեջ միայն հագնվել, ծփաղել, զվարճանալ է և հաճախակի պեյ պապայից (այսինքն՝ պեյ հայրիկ: Չէ՞ որ Էտիեմ պեյը իր հայրն է և այդպես էլ անվանում է նրան) թանկարժեք նվերներ ու համբույրներ ստանալը, որը երկկողմանի լիաբուռն հիացում է պատճառում: Նրա աննկատ մուտքը այդ ընտանիքում, թիթեռային թեթևություն իր շուրջը սփռող կերպարը հետզհետե փոխվում, դառնում է առանցքային, փոխելով մինչև անգամ երիտասարդ Էտիեմի ծակատագիրը: Այդ փոքրամարմին, տասնվեցամյա նոր աճող գեղեցկությամբ պարմանուհին, որը «կը խնդար պէյ պապային եւ անոր վրայէն՝ ամբողջ աշխարհին», գերադասում է տարիքավոր հարուստ ու անտաշ ոճ-

րագործին, իր հասակակից, հղկված ու ուսումնական երիտասարդ էտհեմից: Օշականը նրա միջոցով պարզում է նոր դարաշրջանի թուրք երտասարդության դիմագիծը, որոնց համար երբեք խորշանք ու դատապարտում չդարձավ իրենց ցեղի գործած բոլոր տեսակի ոճրագործությունները: Ավելին, նրանք նախընտրեցին անարդար ու արյունոտ ունեցվածքը արդարից ու ազնիվից:

Վեպի վերջաբանը ամսովոր կերպով կարճ է: Մենք սովոր ենք օշականյան անսպառ հարստության, նրա երկար ընդհանրացումներին ու մանրակրկիտ բացատրություններին, բայց այս վեպն ավարտվում է հանկարծակի:

Ընդամենը չորս տողում տեղադրում է այդ զարհուրելի ոճրի դրդապատժառն ու գործողությունը և անմիջապես ավարտում վեպը: Բայց չէ՞ որ նա վեպը սկսել էր վերջից, մեզ տեղեկացնելով կատարված փաստը և հետո մեզ առաջնորդել էր արդեն ապրված մի հսկայական կյանքի միջով կատարված ոճրի պատժառները պարզաբանելու համար:

Այս վեպում էլ, ինչպես իր նախորդ վեպերում, ժամանակը նշանակալից դեր է խաղում: Վեպի սկզբից մինչև վերջաբանը հսկայական տարածություն է կտրում ընթերցողը, առանց իսկ հոգնելու կամ մտածելու: Ներկա է լինում մի մարդու, մի ընտանիքի, առանձին-առանձին ընտանիքի անդամների, շրջապատի, մի ամբողջ հասարակության, մի ամբողջ կայսրության, այդ կայսրությունը առաջ տանող հասարակական տարբեր լծակների կյանքին:

Իր վերջաբանի առաջաբանում նա մեկնաբանում է վեպը այդ հսկայական տարածությամբ ապրեցնելու, պարզելու, ընդարձակելու, բուն հերոսից էտհեմի որդու՝ Սուլեյմանից, նրա հոր կենսագրության մեջ մխրձվելու և վեպը անուղղակիորեն այլ շեղումով տանելու իր նպատակը: «Պատմեցի ասոնք, գուցե դեմ երթալով, կը կրկնեմ, արուեստին հիմնական պահանջներէն մէկուն, որ Արիստոտելի բերնով կը հրահանգէ միակեդրոն ընթանալ» (նույն տեղում, էջ 237):

Լինելով ծրագրված ստեղծագործող, իր հորդ տաղանդը նա միշտ օգտագործել է միևնույն վեպի մեջ բազմակողմանի խնդիրներ բացահայտելու, բազմաբանակ հարցադրումներ առաջ քաշելու, հարցերը մեծ տարողության մեջ հրամցնելու: Իր խոստովանությունը արդեն հաստատում է, որ նա մտածված է «դեմ գնացել» արվեստի ընդունված պահանջին և ընդարձակվել է, որքան իր նյութի սպառումն է հարկադրել:

Իրապես, խախտելով արվեստի միակենտրոն բացվելու միջոցը, իր անակնկալ, անսպասելի տարածումով, իր տված պատկերը նա հասցրել է մի հսկա ընդհանրացման, որն է՝ արյունից, տոհմից, ցեղից, միջավայրից, սովորույթից մեզ փոխանցվող ծինների անժխտելիությունը: Որ երբ մարդու, ժողովուրդների բնազդները չեն մշակվում ու հղկվում, մարդը դեռ իր նախնական անասնական բնազդների գերին է, որով առաջնորդվում, գործում, մտածում ու ապրում է կյանքում:

իր մահապարտ հերոսը՝ Սուլեյման էֆենտին, դատարանում իր հոր գործած մեղքերը միացնում է իրենին, նույնացնում իրեն հոր հետ. «Ետե՛մ պէյ Չատէ Սիւլէյման էֆէնտին խղճի պարտք կը զգար իրեն հետ քաւելու մաւ իր հայրը, դատաւորին առջեւ ինքզինքը յայտարարելով անոր «հոգին ու մարմինը», կախաղանի համար մեկ օղակի մեջ երկու գլուխ մատուցելով» (էջ 237):

Սակայն քանի որ դատողներն իրենք էլ նույն ուժիւրներին պաշտպան ու մասնակից են, անտեսում են նրա խոստովանության այդ կարևոր հանգամանքը: «Հասկցան անշուշտ: Բայց չկախեցին»։ ահա սա է այն հասարակարգը, որի սրի ու ստորացման տակ ապրել է հայը:

Այս մեծածավալ ընդհանրացման հասնելու համար Օշականը չէր կարող միայն Սուլեյման էֆենտիի բանտից դուրս ապրած քսանամյա կարծ կյանքը ներկայացնել: Ամբողջ մի ժամանակաշրջան, հասարակարգ ու օրենքներ, ցեղային նկարագիր, հարաբերություններ, մտածելակերպ, որը մա այնքան վարպետորեն տեղադրել էր հայր Ետեմ պէյի կերպարում, դուրս կմնային մեր տեսադաշտից, ու վեպը կդառնար մի անգութ ուժի շուրջ ստեղծված սովորական պատմություն: Նա ինքն էլ հաստատում է մեր միտքը. «Չէի կրնար զանց ընել դէմքը, Սիւլէյման էֆէնտիի տրամին բուն հեղինակին: Ամէն մէկ տրամ վառարան մըն է բազմացրիւ ծառագայթներու, որոնք իրենց առանձին արժէքն ու ուղեգիծը ունին» (էջ 237):

Այդ առանձին ուղեգծում կրկին տեսնում ենք ազգային ատելությունից վեր մտածող գրողին ու մարդուն: Երիտասարդ Ետեմի մեջ մա ամեն կերպ փորձում է գտնել մարդուն, գտնել մարդկային տարբեր դիմագիծ, այն հույսով, որ մարդասպանի ժառանգորդի մեջ երբեմն մա մարդկայնություն է ծիլ տալիս: Վերջաբանի իր տողերը իր այդ հույսն է հաստատում՝ «Ու պետք չիկա շատ մեծ գիտուն մը ըլլալու, ընդունելու համար, որ ամէն հանածոյ ցեխի իր լեռովը վերածնելի էի վերջոյ կաթիլ մը ազնիվ մետաղի: Ու գիտենք մոյսպէս, որ մարդկային մեղքերու կոյուղին, երբ խեղճուկ ժեղքէ մը աչք մը արեւ ընդունի, սխրալի ծաղիկով կը փոխարինէ գարշութիւնը իր արմատներուն» (էջ 237):

Մեծ մարդասերն է խոսողը, որի փափագն էր թուրքի մոր սերնդի մեջ տեսնել սխրալի այն ծաղիկը, որ քաջությունը ունենային նույնացնելու իրենց հայրերի ու պապերի գործած ուժիւրները հատկապէս վերջին հայկական ջարդերը և գոնե միտումի գարշությունը փոխարինեին նույն օղակով դատվելու ցանկությամբ:

Հոր և որդու հակադիր կերպարներում Օշականը մի հիմնալի միջոցի է դիմել: Երիտասարդ Սուլեյմանին ներկայացնում է որպէս պարկեշտ, թրքային հատկություններից զերծ, հավասարակշռված ու արդարամիտ մարդու: Բանտային օրենքին հավատարիմ, կիսախուզված գլխով, որը դուրսացնում էր փախչողներին գտնելու գործը, դալուկ դեմքով, կապույտ աչքերով առնական այս երիտասարդը լուսավորված էր այնքան, որքան թույլատրել էր բռնապե-

տության գրաքննության ուսումը: «Չէր կարելի ծիշտ տեսնել անուաշարքը անոր ուղեղին», բայց ինչպես տեսանք, խորշանքով սուր քննադատության ենթարկելով տիրող փտած իշխանությանն ու հասարակարգին, կարծես իրեն փորձում էր հեռացնել այդ ամենից: Նույնիսկ բանտային նեխած մթնոլորտը, որը «մարդը կը վերածէ, ուզէ-չուզէ, գեռունի» չէր կարողացել նվաճել նրան: Նա միշտ մնում էր իր բարձր դիրքում, բոլորի կողմից ակնածված իր բազուկների «դանակը այնքան խոր ու վերջնական մխած» լինելու գեղեցկությամբ: Օշականը իր վեպի հերոսին, ավելի ծիշտ ենթահերոսին, ամբողջապես բարեհաճ իրավիճակներով ներկայացնելուց հետո մեկ նախադասության մեջ է ամփոփում նրա արարքը. «Կը ծակծկեր ու կը սպաններ նոյն դանակով իր հայրն ու կինը», վստահաբար ընթերցողին տալով վերլուծողի առավելությունը: Հատկապես պատասխանելու համար՝ «կոտորած էր թուրքը այս տղուն մէջ» իր առաջադրած հարցին:

Լինելով եռագրության երրորդ վեպը, այս վեպը և՛ անկախ, առանձին վեպ է, և՛ միաժամանակ եռագրության ամփոփումը: Եռագրության այս վեպով Օշականը ավարտում է թուրքի կյանքն ու դիմագիծը իր ամբողջական միջավայրում ներկայացնելը:

Իրավացի է նա, երբ գրում է «Երբ աւարտեց «Հարիւր մէկ տարուան» շարքը, դուք աւելի մօտ էք թուրքին, քան ձեր կարդացած բոլոր նկարագրականներուն ձեզի թելադրածը պիտի արտօնէր ձեզի» («Համապատկեր», էջ 187):

Իր ոճով այս վեպն էլ նման է եռագրության նախորդ երկու՝ «Հաճի Մուրատ», «Հաճի Ապտուլլահ» վեպերին:

Այս վեպն էլ սկսվում է բանտով, 101 տարվան մահվան վճռով դատապարտյալով, ավելի ծիշտ՝ վերջաբանով: Բայց, ինչպես ինքն է ասում, «վեպը վերջաբանով չապրիր», և նա մեր առաջ իր երեք վեպերում էլ հյուսում է մահապարտյալների ոչ թե բանտում անցկացրած կյանքը, այլ նրանց մինչ բանտ ընկնելը ապրածը, նրանց անցյալ տարիների կյանքը տարբեր միջավայրում, տարբեր հանգամանքներում ապրված: Այդ կյանքը տարածում, բաժանում ու հազեցնում է նրանց մանկությունից սկսած դրվագներով, ձևավորում նրանց ներքինն ու մտածումը աստիճանական հասունացմամբ, մեր առջև ապրեցնում նրանց և բանտի նեղ խցից նրանց դուրս բերելով, քայլեցնելով կյանքի տարբեր խնդիրներով, ավարտում է նրանց երթը կրկին բանտի խուց ուղեկցելով:

Նրանց կյանքի այդ երթը երկար ու անասելի դժվարություններով լեցված, հաճախ էլ ծանր ոճիրներով է հազեցված: Դա միայն անհատի կյանքի երթը չէ, այլ մի ամբողջ ժողովրդի, այս դեպքում՝ մեզ իշխող թուրք ժողովրդի:

Նախորդ գլուխներում արդեն խոսեցինք թուրքին գրականություն բերելու Օշականի մղումի մասին: Նա որպես մարդ, որպես ստեղծագործող և որպես հայ իրեն պարտավորված էր զգում խոսելու մի ցեղի մասին, որը ոչ միայն

խաթարել էր մեր ծակատագիրը, այլև որպես քաղցկեղ դաշվել էր մեր հոգիների վրա: Այն նպատակը, որով նա ստեղծել էր այս եռագրությունը տալ թուրքի ամբողջական նկարագիրը, լիովին արդարացրեց իրեն: Առաջին անգամ արվեստի բարձրագույն միջոցով նա մեզ ներկայացրեց դեռ մանկուց ծանաչած, նրա բոլորների տակ հասակ առած թուրքին իր ողջ ծավալով ու խորությամբ և մտածումը թողեց մեզ: Վերլուծելու, հասկանալու, դաս առնելու մտածումը:

Այս վեպում նա պատկերեց թրքության հատակը այնքան բնական, հարազատ, որ ընթերցողը տեսնում է, ոչ թե կարդում կամ պատմություն լսում: Իր գրած էջերը կարողացավ դարձնել կյանքի շնչող, գործող ակնթարթ, ժամեր, օրեր ու տարիներ, որով կարողացավ վերակենդանացնել հարյուր տարի առաջ ապրված թուրքերի կյանքը:

Նախորդների պես, այստեղ էլ նա պատմող է, մասնակից, վերլուծող, հետևությունների հանգող, հյուսող ու ստեղծող: Եվ հաճախ, երբ ինքնամոռաց տարվածությամբ մխրձվում է իր անսպառ պատմության մեջ, ինքն իրեն սթափեցնում է՝ «Պէտք է բանալ վերջին վարագոյրը սա դժոյակ պատմութեան», ասում է նա և յուրաքանչյուր անգամ բացում, ավելի ծիշտ՝ պատռում է, էլ ավելի ծանր ու թանձր վարագույրներ և՛ պատմությունը, և՛ քաղաքակրթությունը, և՛ միջազգային ու մարդկային հարաբերությունները, և՛ մարդու էությունը քողարկող:

Այս վեպում էլ կրկին Արևելքն է իր ամբողջ ծավալով, ուր բախտախնդրությունը, ոսկու գորությունը և՛ տիտղոս է, և՛ իշխանություն: «Արդարութիւնը զգուշացած էր միջամտել անոր հօրը կեանքին, հազարումէկ նկատումներով: Ըրեր՝ աւելի գէշ բան մը, - նուիրագործելով ինչ որ սահմանուած էր արմատացի քանդուելու, տիտղոսելով, պաշտպանելով, փառաւորելով ու պետական գնահատման առաջնորդելով զազոնելի ոճիրը (էջ 238):

Պրուսայի, ծովեզերյա այս քաղաքում մարդկային խառնարան է հույն, ալբանացի, հայ, հրեա և անշուշտ գերիշխողն ու տերը այդ բոլորի թուրքը, ոճրագործ ու անօրեն, որն արյունով ու ջարդով տիրել է այս հողերին իր հանդգնության մեջ մոռանալով, որ իրենը չեն դրամք:

Մարդկային տարբեր կերպարների մի ամբողջ շարան է մեր առջևից սահեցնում Օշականը, մեծ հմտությամբ մի քանի վրձնահարվածով տալիս նրանց էության ողջ նկարագիրը: Դրանք նաև պառավներ են, կյանքի գաղջ փորձառությամբ թրծված վարձկաններ, որոնք դրամի համար չեն խնայում մինչև իսկ իրենց սեռին՝ անմեղ աղջիկներին, այդ հռչակավոր ավազակին զոհ դարձնելու: Հարյուրապետներ, ոստիկանապետեր, սևամորթ ծառայողներ իր ոճրի ու բռնաբարության մասնակից կիսողներ, պաշտոնագուրկ փաշաներ և անշուշտ կանայք:

Բայց դրանց կենտրոնում և գործողության առանցքն ու իր շուրջը դարձնողը՝ անշուշտ էտիեն պեյր: Այս ավազակ ոճրագործի կերպարը այնքան պատկերավոր է ստեղծել Օշականը, որ կարդալիս զգուշանում ես, հանկարծ մոտդ չտեսնելու նրան:

Ինքնավստահ ու ամենակարող ոճրագործի կերպարին հանկարծ նա ավելացնում է ընդամենը մի բառ, «գեղացի պեյր» և անմիջապես տեսնում ենք նրա բոքիկությունը, խեղճությունը, ոչնչացումը:

Փոքրամարմին, սնդիկի արագությամբ մտածող, գործող ու անպատիժ սպրդող այս կերպարում մի ամբողջ հավաքականություն է տեղադրել այս մեծ մտածողը: Դա թուրքն է իր ընդհանրության, իր անբարո կեցությամբ, ոճիրներով կերտած իր անցյալի ու ներկայի պատմությամբ ծանրաբեռ: Դա մի ամբողջ սերնդի հավաքական դիմագիծն է, որոնք առաջնորդելու էին մեր ջարդերը: Եվ վեպի առաջին մասում տված հարցը՝ «կոտորած էր թուրքը այս տղուն մեջ», նա վերջում թողնում է ընթերցողին հետևության հանգելու:

Օշականի յուրաքանչյուր վեպում ժամանակը ձգգրիտ դերակատար է դառնում, ինչպես կյանքում: Եվ այս վեպում ժամանակը այնպիսի արագությամբ է հոսում, այնքան սրընթացորեն է հասունացնում դեպքերը, ծրագրերը, գործողությունները, այնպիսի հմտությամբ է պատմական թռիչքներ ու հետևություններ անում, և մեր առջև ներկայացնում այն սերնդին, որը ավելի ուշ երիտթուրք անուն էր կրելու:

Ժամանակի հետ նրա զգույշ շփումը մեկ այլ խորություն էր ընդգրկում իր մեջ: Նա գիտեր, որ ժամանակը խուճացնում է արվեստի գործերը և միայն կենդանի պահում իրական մեծ ստեղծագործությունները, որոնք պարունակում էին էություն, հոգեղեն բջիջներ: Ժիշտ է, նա գրում էր արդեն հեռացած, անցած, ապրված կյանքի մասին, բայց մի ժողովրդի, որը դեռ մինչև օրս էլ խառնված է մեր ծակատագրին, ու մենք ի վերջո պարտավոր ենք ծանաչել նրան ամբողջ խորությամբ:

Զիաշված Օշականի այլ գործերը, այս եռագրությունը մեզ տալիս է այդ պատկերը, չխուճանալով ժամանակի ամենագոր ազդեցությունից, որովհետև գործողությունների և նկարագրությունների շարանով չէ, որ ստեղծել է իր այս գործերը: Այլ նախ և առաջ այդ ազգին մինչև ուղն ու ծուծը ծանաչելով և արվեստի բարձրագույն բջիջներով հագեցրել իր տվածը, որը վեր է պատմություն ու պատկեր լինելուց: Դա մտածում ու իմաստ է: Ինչպես իր բոլոր վեպերում, այստեղ էլ նրա լեզուն պատկերավոր է, գունեղ, հորդուն, յուրաքանչյուր տողում ապշեցնում է մարդուն իր նրբությամբ, լեզուն հայելու պես պատկերավոր դարձնելու կարողությամբ:

Ահավոր դժվար է վեպի ձգգրիտ լեզուն գտնելը, բայց Օշականը երբեք այդ դժվարությունը չունի, ավելին՝ նրա լեզուն հոգու, մարդու ընդերքում

եռացող զգացումները արտահայտելու ժամանակ վերածվում է իմաստութ-
յան: Համեմատության մեկ բառի մեջ տեղադրում ապրումների, մտածումնե-
րի հսկայական խտացում, ուր պատկերն է դառնում խորը իմաստ փոխանցո-
ղը: Ահա երիտասարդ դատապարտյալ Սուլեյման էֆենտիի հոգեվիժակը 101
տարվա դատապարտված իր վճռի ընդունման ցնցումից հետո: «Սպասումին
ստամները քաշուեցան քիչ-քիչ անոր ուղեղն ու զայն ձգեցին տեղդութեան
ծովում մէջ, անիմաստ խլեակ» (էջ 15):

Իսկ ավելի հաճախ իր լեզուն փոխարկվում է բանաստեղծական եթերայ-
նության մարդկային խորքի անբացատրելի մպեղելիս: Երբ Սերվինազ հանը-
մը ամուսնու կողմից վայրագաբար խոշտանգվելուց հետո աչքերն է բացում և
իր առջև տեսնում իր որդուն՝ «Այնքան ծանր էր այս հանդիպումը, մանաւանդ
հիւանդ կողմին համար, որ տիկինին աչքը՝ անկարող հանդուրժելու, ընկրկե-
ցաւ, ջուրին մէջ վերստին սուզուող գոհարի մը նման: Բայց շունչը-դերձանի
թել-մնաց երեսին, ջուրին վրա ծփացող մետաքս լարի մը նման» (էջ 223):
Այսպիսի խոր համեմատություն պատկերներով է շնչում վեպը:

Իր պատկերները, մտքերը, գործողությունները այնպիսի թափով, այնպիսի
առատությամբ է տեղում, որ չես հասցնում իր հետ համահավասար ընթանալ:
Հաճախ հարկ է լինում կրկնել էջը, ներկայացվող խորությունն ըմբռնելու համար:

Այսօր, ավելի քան երբևէ, մենք կարիք ունենք կրկին ու կրկին ընթերցելու
«Հարիւր Մէկ Տարուան» խորագրի տակ ամփոփված եռագրության վեպերը,
քանի որ դեռ չլուծված դատ ունենք այս մեծ մտածողի ներկայացրած թուրքի
հետ, որին այդպես էլ մինչև օրս թերանում ենք ծանաչել: Բայց և ժամանակը
պարտադրում է մեզ կրկին ծեռք մեկնելու Օշականին, կրկին հաղորդվելու
նրա ներկայացրած այն միջավայրին, այն կյանքին, որը եղել է մեր կործան-
ման հիմնաքարը, բայց որն ապրել ենք առանց վերլուծման ու մտածումի,
առանց խորը ծանաչելու մեզ կործանող այն սերնդին, որոնց կարկառուն
տիպարն է Բել Էտիենը և նրան շրջապատող դեռ նախնական բնազդներից
չազատագրված, մինչև օրս մեր իրավունքները ոտնահարող թուրքի նոր սե-
րունդները:

Անհրաժեշտ է կարդալ, վերլուծել Օշականին, ոչ միայն հարստանալու
համար նրա բարձրարժեք արվեստով, այլ նաև իմաստնանալու, մեր ազգա-
յին կյանքում մեր բացթողումները ուղղելու:

Հազվադեպ է պատահում, որ գրական ստեղծագործությունը ազգային
ընթերցումներում հեղաշրջում կատարի: Օշականի ստեղծագործությունները
այդ հազվադեպ երևույթներից են, քանի որ դրանք ամբողջովին ազգային,
սլաոմական և բնութամբ մարդու մեջ դրոշմված, դեպի արմատները տանող
անբացատրելի երևույթների խորհուրդն է պարզում: